ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ք. Գավառ , Կենտրոնական հրապարակ N 7
Հեռ. 060650035
Կայք gegharkunik.mtad.am
Էլ. փոստ gegharkunik@mta.gov.am
N 02/5767
27 07 2020թ.

«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
HETQ.am-Ի ԼՐԱԳՐՈՂ ԱՆՅԱ ՍԱՐԿԻՍՈՎԱՅԻՆ

Հարգելի՛ տիկին Սարկիսովա

Ի պատասխան ՀՀ Գեղարքունիքի մարզպետին հասցեագրված Ձեր 17.07.2020թ. գրության՝ տեղեկացնում եմ, որ Գեղամասար խոշորացված համայնքի 18 գյուղական բնակավայրերից մեկում՝ Գեղամասար գյուղում, գործում է «Գեղամասարի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ը, իսկ մնացած 17 բնակավայրերում՝ «Վարդենիսի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի, «Գեղամասարի առողջության առաջնային պահպանման կենտրոն» և «Մեծ Մասրիկի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ների կազմում գործող բուժակ-մանկաբարձական կետերը /ԲՄԿ-ները/, համապատասխանաբար՝ Սոթքի, Կութի, Ազատի, Շատվանի, Նորաբակի, Ջաղացաձորի, Գեղամաբակի, Շատջրեքի, Կուտականի, Տրետուքի, Փոքր Մասրիկի, Կախակնի, Փամբակի, Դարանակի, Արեգունի, Արփունքի և Ավազանի ԲՄԿ-ները:

Համայնքի բնակչությանն պատշաճ կերպով մատուցվում են առաջնային բժշկական օգնություն և սպասարկում՝ իրականացնելով ընտանեկան բժշկության չափորոշիչով սահմանված բոլոր գործառույթները: Բնակչությանն տրամադրվում է բժշկական խորհրդատվական, կանխարգելիչ, ախտորոշիչ հետազոտությունների, բուժական, դեղորայքային օգնության ցուցաբերում, վերականգնողական բուժման և բժշկականական փորձաքննության ուղեգրում և ոչ բուժական բնույթի այլ ծառայությունների մատուցում:

Առաջիկայում համայնքի բնակավայրերում նախատեսված չէ ստեղծել նոր բուժամբուլատորիաներ կամ պոլիկլինիկա:

Ֆրանսիայի Իզերի դեպարտամենտի և ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի համագործակցությամբ Վարդենիսի տարածքի բժշկական հաստատություններում և ԲՄԿ-ներում իրականացվել են վերանորոգման աշխատանքներ: Վերանորոգվել են «Գեղամասարի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի, Արփունքի, Ավազանի, Արեգունու, Փամբակի, Կութի, Ջաղացաձորի, Շատջրեքի և Տրետուքի ԲՄԿ-ների շենքերը: «Բժիշկներ առանց սահմանի» ՀԿ-ի կողմից վերանորոգվել են «Գեղամասարի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի, Սոթքի, Ազատի, Նորաբակի ԲՄԿ-ները: Կուտականի ԲՄԿ-ի վերանորոգումը կատարվել է Կուտականի գյուղապետարանի կողմից: Կախակնի և Փոքր Մասրիկի ԲՄԿ-ների վերանորոգումը իրականացվել է «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպության կողմից:

Միաժամանակ՝ Ձեզ եմ տրամադրում Գեղամասար խոշորացված համայնքի բնակչությանը սպասարկող՝ ՀՀ Գեղարքունիքի մարզային ենթակայության բուժհաստատությունների ցանկը:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

Հարգանքներով՝

27.07.2020

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Առողջապահության և սոցիալական
ապահովության վարչություն
Կատարող՝ Լուսինե Վարդանյան
Հեռ.՝ 60650623